

զփորձս առեր՝ կարող ես եւ օգնական լինիլ փորձանաւորաց: Եւ եւս զդարձն փոխարինի ջանասցես հատուցանել կաթուղիկէ եկեղեցւոյ՝ կառավարելով զանգամս: Զի որ երբեմն սգաւոր էր վասն շփոթման՝ ունկն ցաւելով, ահն արտասուելով, բերան հայհոյութեամբ, ձեռք կոնծելով եւ ոտք կայթակղելով, այսօր վասն գլխոյդ փառաւորելոյ փառաւորեալ մխիթարեսցին ըստ մարգարէին զոր ի վերոյ գրեցի: Այլ համարձակելի է ի սէր քո գրել զայս ի փառաւորութիւնն անդամոյս եւ ոչ ի դատապարտութիւնն. քանզի որ բարձրացոյցն զքեզ ի պատիւ փեսայութեան ամենասրբուհւոյ, նա գիտէ զքեզ կառավարել, եւ կառավարեսցես դու քոյին աստուածապարզեւ իմաստութեամբդ, որպէս երբեմն ի Միջագետս, Թրակիայ եւ Պաղեստին, արդ եւ յԱրարատեան¹⁾ կլէմի: Զի որ քո մարգարէութիւնն էր կանխաւ այն թէ Մարդ զինքն յինչ փայէ տեսնու՝ յայն փայէն կու գտնու, եւ իմ մարգարէութիւնս ի նսեմ յանկեան եւ խուսափեալ ի պատուոյ փինատ բարուք՝ այդպէս կատարեցաւ. եւ զկամակորութիւնս իմ ես ինձէն գիտեմ: Ընդէ՞ր ապա եւ ամենայն սէր եւ ուխտ եւ հազ ու հուզ միով յանցանօք²⁾ սպառեցաւ՝ զարմանամ. ո՞չ եկն ախորժ միթէ վասն քո տպագրեալ յարձանագրութիւնն ի ճառ պատմութեանցն երուսաղէմի՝ զերախտիս պայծառութեան, շինութեան եւ նորոգութեան քո եւ այլն: Յիրաւ ես եւ ստոյգ է առակ նախնեացն. կաթով մտեր եւ հոգով ելնու բարք, որ յարգանդ մօր ի նկարելն մարդկութեանս ըստ Յոբայ (Բեբէ):

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 32բ-35ա)

1) յԱրատոյարամ.

2) անցանօք.